ԿԱՐԻՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ, ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ, 1894-1896թթ. ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ, ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՁՈՀԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՁԱՏԻԿՅԱՆ

Արևմտյան Հայաստանի վիճակագրության վրա թուրքական կառավարության ուշադրությունն առավել կենտրոնացավ Բեռլինի վեհաժողովից հետո: Ասպարեզ բերվեցին այնպիսի տեղեկություններ, որոնք, կեղծելով իրականությունը, միջազգային հանրությանն էին ներկայացնում խեղաթյուրված ժողովրդագրական տվյալներ: Կայսրության արտաքին գործերի նախարար Աբեդին փաշան, պատասխանելով տերությունների հարցումներին, հայտնում էր, թե Վանի, Դիարբեքիրի, Էրզրումի, Սվազի վիլայեթներում հայերը կազմում են բնակչության ընդամենը 17%-ը, իսկ մահմեդականները՝ 79%-ը:[1]

Բնական է, որ ճշմարտության այդպիսի կեղծումն այդուհետև ավելի էր խճճելու վիճակագրությունը: Օգտվելով ընձեռված հնարավորությունից, արժանանալով եվրոպական տերությունների հովանավորությանը, օգտագործելով նրանց հակասությունները, սուլթանական վարչակարգը հիմնավորում էր իր կեղծիքները, որոնք շահագրգիռ երկրների կողմից դրվում էին շրջանառության մեջ: Չբավարարվելով դրանով, Բ. Դուտն անանցանելի պատնեշներ էր ստեղծում բոլոր նրանց համար, ովքեր փորձ էին անում բացահայտել ճշմարտությունը:

Ոչնչացման վտանգի առաջ կանգնած ժողովուրդն ուղիներ էր որոնում իր գոյությունը պահպանելու համար: Ուղիներից մեկն էլ սեփական նախաձեռնությամբ իրականացվող տեղաշարժերն էին, արտագաղթը դեպի համեմատաբար ապահով գավառներ: Տեղաշարժերը հիմնականում կատարվում էին Քղիից, Թորթումից, Կիսկիմից, Բաբերդից, Երզնկայից, Բայազետից: Տեղաշարժերը, սակայն, չէին գրանցվում ո՛չ պետության, ո՛չ եկեղեցու կողմից, և հայ բնակչության այդ հատվածը դուրս էր մնում վիճակագրությունից:

Գոյության պահպանության հաջորդ եղանակն առերես մահմեդականություն ընդունելն էր: Ներքուստ նրանք մնում էին հայեր, գաղտնի պահպանում իրենց հավատը, ավանդույթները, կատարում ծիսակատարությունները: Հայության այդ հատվածն անվանվում էր կեսկեսներ, որոնք ինչ-

քան էլ անհասկանալի է, չէին մտնում հայ բնակչության թվի մեջ: Կրոնափոխության ճանապարհով ուծացումն առավել մատչելի տարբերակ էր վարչակարգի համար, որովհետև եթե հայի բազմանդամ ընտանիքից թեկուզ մեկը դիմում էր այդ քայլին, ապա ամբողջ ընտանիքի ունեցվածքը, հողը դառնում էր նրա սեփականությունը, և ավելի դյուրին էր դառնում տնտեսական անապահով հայության այդ հատվածի ձուլումը:

Եթե տվորական տեղաշարժերը չէին արժանանում ուշադրության, ապա պարզ է, որ հիշատակություն անգամ չէր կարող լինել արտագաղթածների մասին: Այս տեսանկյունից՝ դժվար է ընդունել շրջանառության մեջ գտնվող կայսրության խոշոր քաղաքներում և Պոլսում տեղավորված հայերի քանակի մասին պաշտոնական տվյալները, քանզի հայ բնակչության քանակն այն օր-օրի ենթարկվում էր փոփոխության և չէր արտացոլվում ընդհանուր քանակի մեջ:

Հետաքրքրություն ներկայացնող ժամանակահատվածի հայակործան երևույթներից մեկն էլ հովանավորչության ճանապարհով գոյության պահպանությունն էր: Անպաշտպան հայկական գյուղերը պարբերաբար կրկնվող հարստահարություններից, կոտորածներից խուսափելու հույսով կամ իրենց գյուղերում տեղ էին տալիս հովանավոր ընտրած թուրքի, քրդի ընտանիքին, կամ ընդունում էին «օսմանլի» անվանումը: Նման գյուղերը նույնպես դուրս էին մնում վիճակագրությունից, թեև բնակչությունը հայ էր: Պակաս դեր չէր խաղում նաև գյուղերի անվանափոխության գործընթացը: Քրդերը, թուրքերը, չերքեզները բռնի տեղավորվելով հայկական գյուղերում, փոխում էին նրանց անունները, և վիճակագիրների ուշադրությունից դուրս էին մնում նաև այդ գյուղերը:

Անտեսելով հայտնի և անհայտ դժվարությունները, վիճակագիրների հայրենանվեր ներկայացուցիչները, անձնուրաց աշխատանքով, երբեմն կարողանում էին հավաքել հավաստի տեղեկություններ, որոնք բացահայտում էին թուրքական վիճակագրության էությունը, հիմքեր ստեղծում իրականությանը համապատասխանող վիճակագրության ստեղծման համար:

Իրականությունը գտնելու անհրաժեշտությունն այսօր պահանջում է, որ մեր ձեռքի տակ առկա ճշմարիտ տեղեկությունները դասակարգվեն, անցկացվեն համեմատական վերլուծություններ: Այդ նպատակով կազմել ենք աղյուսակներ, ուշադրությունից դուրս չթողնելով նաև այլայլգի բնակչության մասին տեղեկությունները, որպեսզի հետագայում, համեմատությունների միջոցով, պարզորոշ նկատվի ժողովրդավարություն իրական պատկերն ու փոփոխության ընթացքը:

Մեր կազմած աղյուսակները, ստացված արդյունքները, նկատելի տարբերություններ ունեն առ այսօր շրջանառության մեջ գտնվող վիճակագրական տվյալներից:

Առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել 1878թ., 1894-1896թթ. հետո ընկած ժամանակահատվածների վիճակագրության վրա, ընդգծելով ջարդերի (ներառյալ 1915թ. Մեծ եղեռնը) քաղաքականության կործանարար ազդեցությունը ժողովրդագրական փոփոխության վրա: Արծարծված խնդիրն ավելի է պարզորոշվում, երբ շրջանառության մեջ ենք բերում մինչև 1914թ. ընկած շրջանի ժողովրդագրական ցուցանիշները, որից հետո հստակ երևում է, թե ինչ խորությամբ էր կատարվում արևմտահայության ուծացման և ֆիզիկական բնաջնջման գործընթացը:

Ի մասնավորի՝ ներկայացնում ենք Կարինի նահանգի հայ բնակ-

չության թվաքանակին վերաբերող ժողովրդագրական տվյալները՝ համեմատական վերլուծությամբ:

Կարինի նահանգի հայ բնակչության քանակը

Մեր հաշվումներով[2]				Ա-Դ-ո հաշվումներով[3]			
Գավառները, գավառակները	գյուղ	տուն	շունչ	մահմեդ.	գյուղ	տուն	շունչ
Կարինի գավառ							
Կարինի գավառակ	56	6957	33990	10297	51	2768	19376
Կարին քաղ.		2142	15000	28000		2500	15000
Բաղեռոի գավառակ	30	3267	20134	19000	29		11914
Բաբերդ քաղ.		391	4301	15422			2400
Բասենի գավառակ	37	2207	15056	19219	57		12404
Հասանկալա		57	265	1300		-	-
Դեղջանի գավառակ	42	3144	21873	15422	31		9128
Մամախաթուն քաղ.		20	124	11146		-	-
Թորթումի գավառակ	15	3701	22009	10225	13		2829
Թորթում քաղ.		557	3900	910		-	-
Խնուսի գավառակ	18	2121	13049	12197	32		13020
Խնուս քաղ.		257	1701	2544	-	325	2275
Կիսկիմի գավառակ	22	1749	12091	1750	6		7644
Կիսկիմ ավան		22	192	350	-	-	-
Սաեռի գավառակ	26	638	4880	4711	18		3122
Սպեր քաղ.		45	327	2540		-	-
Քոհի գավառակ	50	4370	27505	3052	49	2326	16255
Քոի ավան		441	3087	1533		350	2450
Բայազետի գավառ							
Բայազետի գավառակ	13	1263	5758	6063	3		1470
Բայազետ քաղ.		341	2387	1100		350	2450
Դիադինի գավառակ	9	460	2211	7109	7		1092
Դիադին ավան		145	1015	711			
Այաշկերտի գավառակ	14	1089	6911	21802	11		4480
Այաշկերտ քաղ.		102	802	1500		200	1400
Դուբառի գավառակ	12	179	1239	11599	22		1421
Դուբաղ ավան		6	42	5580			
Կարաքիլիսեի գավառակ	9	880	4201	3023	9	274	1918
Կարաքիլիսե/Թոփրակ		220	1925	1000		350	2450
Երզնկայի գավառ							
Երզնկայի գավառակ	40	5170	25399	2436	31		7168
Երզնկա քաղ.		1542	10798	14546		1500	9000
Գուրուչայի գավառակ	6	663	4073	532	6		2725
Կամախի գավառակ	11	589	3802	10793	11		4483
Կամախ քաղ.		46	346	10000		48	298
Կերճանիսի գավառակ	2	122	1545	775	3		1421
Կերճանիս ավան		35	255				

Կարինի նահանգի 18 քաղաքներում, գավառակենտրոններում և 413 գյուղերում հայերն ունեին 44938 տուն, 272202 շունչ, քրդերն ու թուրքերը՝ 558187 շունչ բնակչություն: Ա-Դ-ոյի հաշվումներով՝ 9 քաղաք և 389 գյուղ, 23413 տուն, 159593 շունչ հայ բնակչություն:[4]

Մեր ստացած վերջնական արդյունքը չափազանցություն չէ, ավելին՝ նվազագույն ցուցանիշն է, քանզի նահանգի հայաբնակ, անունները

փոխած, գյուղերի մասին տեղեկություններն իսպառ բացակայում են, կամ դրանք ներկայացված են չափազանց թերի: Հիշենք նաև, որ մեր հաշվումներն ընդհանուրի միջինի արտահայտություններն են միայն: Ասվածն ապացուցելու նպատակով անդրադառնանք գեթ մի քանի վկայություններին: Այսպես, եթե Կարինի նահանգի Կարինի գավառակի Գզլքիլիսե գյուղը 1879թ. ուներ 30 տուն, 230 շունչ հայ բնակչություն[5], ապա 1914թ. պատերազմից առաջ գյուղը կրել է 26 տան, 210 շնչի կորուստ:[6] Այստեղ, ինչ խոսք, իրենց քայքայիչ դերն են ունեցել 1877-1878թթ. պատերազմը և համիդյան կոտորածները:

Բաբերդի գավառակի Բլրակ գյուղը, միջին տարբերակով, ունեցել է 234 տուն, 1414 շունչ հայ բնակչություն: Մինչդեռ 19-րդ դարի առաջին կեսին գյուղն ունեցել է 700 տուն, 4900 շունչ հայ բնակչություն: Այսինքն, 1800-1909թթ. գյուղը կրել է 55 տան, 3810 շունչ բնակչության կորուստ:

Բաբերդ քաղաքը 1474-1870թթ., 396 տարում, որևէ աճ չի ունեցել: Ավելի պարզ՝ 1474թ. քաղաքն ունեցել է 175 տուն, 1500 ընտանիք[7], 1830-1850թթ.՝ 13000 շունչ բնակչություն, որից 8000-ը՝ հայ, 1870թ. ունեցել է 1823 շունչ հայ բնակչություն:[8] Այսինքն, հայերի քանակը նվազել է ավելի քան 6000 շնչով:

Դիադին քաղաքը 19-րդ դարի առաջին կեսին ուներ 500 տուն խառը բնակչություն: 1880թ. քաղաքն ուներ 80 տուն խառը բնակչություն (40 տուն, 280 շունչ):[9] 1909թ. քաղաքում ապրում էին 15 տուն հայեր:[10] Ընդունենք կեսի տարբերակը՝ 250 տուն, 1750 շունչ հայ բնակչություն:[11] Այստեղից էլ՝ 102 տարվա (1807-1909թթ. ընթացքում) հայերի թիվը կրճատվել է 1645 շնչով (250-15=235, 1750-105=1645):

Երզնկայի գավառի Մեղուցիկ գյուղը մինչև 1895-96թթ. կոտորածն ուներ 1700 բնակիչ, Երկանը՝ 1000, Մահմուտցիկը՝ 1500, Գյուլիեն՝ 2000, Մթննին՝ 1750: Կոտորածներից նշված գյուղերից փրկվել են ընդամենը 34 հայ: Այսինքն, միայն 5 մեծ գյուղերում կոտորվել է 7862 շունչ բնակչություն:[12]

Ավելին, արխիվային նույն փաստաթուղթը հայտնում է, որ գավառի 30 գյուղերի 15064 շունչ հայ բնակչությունից փրկվել են 206 մարդ, այսինքն՝ կոտորվել է 19558 շունչ հայ բնակչություն:[13]

Արխիվային փաստաթղթերից մեկը հայտնում է, որ 1881թ. նահանգն ունեցել է 333476[14], 1882թ.՝ 280000 շունչ հայ բնակչություն:[15] Այսինքն, միայն մեկ տարում հայ բնակչությունը նվազել է 53476 շնչով: Կարելի՞ է ընդունել այս ցուցանիշը: Անշուշտ, որովհետև, թուրքական կայսրությունում 1887թ. կար 530000 կրոնափոխված քրիստոնյա:[16]

1870-1873թթ., ըստ դավանանքի, նահանգում բնակչության աճի ընթացքն այսպիսի պատկեր ունի. մահմեդականներն աճել են 12790, քրիստոնյաները՝ 299 շնչով: Բայազետի գավառակում, 1874-1875թթ., համապատասխանաբար՝ 2853 և 661 շնչով:[17]

Եթե այս ցուցանիշը տարածենք ամբողջ 1850-1915թթ. վրա, ապա մեր ստացած հաշվարկները ոչ թե միջինի, այլ նվազագույնի արդյունքն են, որովհետև, ինչպես վկայում է մեկ այլ փաստաթուղթ, 1877-1912թթ. նահանգում կոտորվել է 341000, արտաքսվել՝ 437760 հայ:[18] Մեկ այլ տվյալ. եթե մինչև 1914թ. Արևմտյան Հայաստանում 1 կմ. քառ. վրա ապրում էր 13 մարդ, ապա 1914թ. հետո՝ 9,4 մարդ:[19]

Մեր հաշվարկներին վստահության առիթ է տալիս նաև 1878թ. Կ. Պոլսի պատրիարքարանի կազմած վիճակագրությունը, որի համաձայն,

Էրզրումի, Վանի, Բաղեշի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի նահանգներում ապրում էին 1630000 մարդ, այդ թվում՝ Էրզրումի նահանգում՝ 280000 հայ[20], որը կազմում էր Արևմտյան Հայաստանի հայ բնակչության 17-18%-ը:

1882-1912թթ. հայերի քանակը նվազել է 560000-ով, հայտնում է փաստաթղթերից մեկը:[21] Եթե բնակչության նշված քանակից հանենք 1894-1896թթ. ջարդերի զոհերի թիվը (300000 կամ 341000), ապա կստանանք արտագաղթածների և կրոնափոխվածների քանակը՝ 260000 կամ 219000: Եթե ընդունենք, որ 1878-1912թթ. արտագաղթել է 150000 մարդ, կստանանք նաև կրոնափոխվածների քանակը՝ 150000 կամ 69000 շունչ:

Գիտենք, որ 1830-1878թթ. նահանգից արտագաղթել են հայկական 9000 ընտանիք. մեկ տունը նվազագույնը 7 շնչով հաշվելով անգամ, արտագաղթածների թիվը կկազմի 63000 շունչ: Այսպիսով, որպեսզի հաշվենք համիդյան կոտորածների հետևանքով նահանգի հայության կորուստները, պետք է կատարենք համեմատական վերլուծություն: Ընդունված է, որ հիշյալ ջարդերին զոհ է գնացել 300000 հայ: Որոշ աղբյուրներ թերահավատ են այս քանակի նկատմամբ և պնդում են, որ զոհերի թիվը պետք է հաշվել 500000:[22] Նշված տարիներին նահանգի հայ բնակչությունը կազմում էր Արևմտյան Հայաստանի հայ բնակչության (1630000) 17,1%-ը՝ 280000 շունչ: Համաձայն Ա. Համբարյանի, 0,7% աճի տարբերակով Արևմտյան Հայաստանում բնական աճով պետք է լիներ.

Նահանգ	1878թ.	մինչև 1895թ.	1895թ. ներառյալ
Վանի	400000	447600	450400
Բիթլիսի	250000	279750	281500
Դիարբեքիրի	150000	167850	168900
Էրզրումի	280000	313320	315280
Խարբերդի	270000	302130	304020
Սվազի	280000	313320	315280
Ընդամենը	1630000	1823970	1835380

300000 զոհ կազմում էին 2-րդ ցուցանիշի 16447%-ը, որտեղից էլ կարող ենք ըստ նահանգների ստանալ զոհերի քանակը.

Նահանգ	1895թ.	16,447%	1895թ. ներառյալ 16,345%	կոտորածի զոհ
Վանի	447600	73616	281500	46011
Բիթլիսի	279750	46010	168900	27606
Դիսրբեքիրի	167850	27606	168900	27606
Էրզրումի	313320	51531	315280	51533
Խարբերդի	302130	49691	304020	49692
Սվազի	313320	51531	315280	51533
Ընդամենը	1833970	299988	1835380	299994

Մեր հաշվարկներով, 1878-95թթ. Կարինի նահանգում կար 272202 հայ ազգաբնակչություն: Կատարելով նույն հաշվարկը, կստանանք զոհերի քանակը՝ 44769 (272202-16,447=44769): Կատարված հաշվումների, հատկապես Կարինի նահանգի հատվածին առնչվող տվյալների արժանահավատությանը հավաստելու համար բերենք մի քանի վկայություններ: Նահանգի Բաբերդի գավառակում 1895-1896թթ. 165 գյուղ ավերվել է, բնակչությունը կոտորվել: Այսինքն, թեև մենք շարադրանքում

ընդունել ենք գավառակում 30 հայաբնակ գյուղ, սակայն, բերված փաստաթուղթը վկայում է, որ գավառակի 165 գյուղերում ևս եղել է հայ բնակչություն: Դրանք հայաբնակ, անունները փոխված կամ «օսմանլի» կոչված գյուղեր են, որոնք թեև առերես ընդունել էին մահմեդականություն, բայց շարունակում էին հայեցի կենցաղը, պահպանում դավանանքը: Թորդանում ավերվել է 40, Բասենում՝ 14, Օվայում՝ (Կարինի գավառում) 23, Քոլիիում՝ 9, Բայազետի գավառակում՝ 24 գյուղ[23], որոնց բնակչությունը կոտորվել է (110 գյուղ միայն 6 գավառակում): Եթե յուրաքանչյուր գյուղում նվազագույնն ընդունենք 30 ընտանիք, ապա դրանց բնակչությունը կկազմի 23100 (110x30=3300 տուն x7=23100): Շարունակենք ներկայացնել աղբյուրների վկայությունները: Հայտնվում է, որ միայն Կարին քաղաքում կոտորվել է 5000 հայ[24], Դերջանի գավառակի 20000 հայ բնակչությունից ազատվել է 95 շունչ[25], Բայազետ քաղաքի 300 տուն հայ բնակչությունից՝ 100 հոգի:[26] Այստեղից՝ միայն հայտնի փաստերի գումարում ունենում ենք 50005 շունչ կոտորածի զոհ գնացած անձինք (23100+5000+19905+2000=50005):

Հաշվարկները համոզում են, որ ուշադրության է արժանի 500000-ին հասնող զոհերի քանակի մասին վկայությունը, քանզի նույն աղբյուրը հայտնում է նաև, որ կոտորվել է 2600 քաղաքների ու գյուղերի բնակչություն, 559 գյուղ ընդունել է մահմեդականություն, սպանվել է 179 գյուղի քահանա, 328 եկեղեցի վերածվել է մզկիթի, 546000 կին, ծեր և երեխա մնացել է առանց խնամակալի:[27] Այսինքն, եթե 2600 քաղաքներից ու գյուղերից յուրաքանչյուրում ընդունենք 30 տուն հայ բնակչություն, յուրաքանչյուր տան անդամների նվազագույն թիվը 7, կստանանք նույն թիվը՝ 2600x30=78000 տուն x7=546000: Փաստերը ստիպում են եզրակացնել, որ զոհերի՝ ընդունելի համարվող 300000 թիվը, խիստ կասկածելի է, ինչը ցույց է տալիս նաև ստորև ներկայացված հաշվարկը: 1895-1915թթ. նույն բնական աճի ընթացքով, հանած համիդյան կոտորածների զոհերի քանակը (300000), կունենանք հետևյալ պատկերը.

Նահանգ	1895թ.	1915թ.	20 տարում 0,7% աճը
Վանի	447600	373984	426324
Բիթլիսի	279750	233740	266463
Դիարբեքիրի	167850	140244	159878
Էրզրումի	313320	261807	298439
Խարբերդի	302130	252439	297780
Սվազի	313320	261789	298439
Ընդամենը	1823970	1524402	1737323

Հաշվենք մինչև 1895թ. և 1895թ. ներառյալ, 0,7% բնական աճի դեպքում բնակչության քանակը:

Նահանգ	մինչև 1895թ.	1915թ.	1895թ. ներառյալ	1915թ.	1915թ. կոտորածի զոհ 2	4
Վանի	447600	510264	450600	513456	368699	368097
Բիթլիսի	279750	318915	281500	320910	230062	230006
Դիարբեքիրի	167850	191349	168901	192456	138037	138036
Էրզրումի	313320	357184	315280	359419	257669	257668
Խարբերդի	302130	344428	304020	346582	248467	248465
Սվազի	313320	357184	315280	359419	257669	257668
Ընդամենը	2079324			2092333		

Եթե ստացված թվերին գումարենք 260000 կրոնափոխվածների քանակը, կունենանք 2339324 և 2352333 հայ բնակչություն: Բնակչության նշված քանակից 1915թ. կոտորածի զոհ է գնացել, ըստ շրջանառվող տվյալների, 1,5 մլն. հայ, այսինքն, երկու դեպքում էլ բնակչության 72, 16-72, 17%-ը զոհ է գնացել կոտորածի: Կարինի նահանգում 357184 հայ բնակչությունից կոտորածի զոհ է գնացել է 257669 և 359419 բնակչությունից՝ 257668 հոգի:

1845թ. թուրքական վիճակագրությամբ Արևմտյան Հայաստանում կար 3833297 հայ բնակչություն: Մեկ տարում նույն՝ 0,7% բնական աճի դեպքում, 1915թ. կունենանք 3419344, 1915թ.՝ 3443297 հայ բնակչություն:

Այս ամենն Արևմտյան Հայաստանում: Ամբողջ թուրքական կայսրությունում ապրում էին ևս 1030000 հայ. Կիլիկիայում՝ 380000, Ասիական Թուրքիայում՝ 455000, Եվրոպական Թուրքիայում՝ 195000: Այստեղից՝ ունենում ենք հայության քանակն ամբողջ կայսրությունում. 2079324-ի դեպքում՝ 3109324, 2092000-ի դեպքում՝ 3122333, 1845թ. թուրքական վիճակագրությամբ՝ 4473279 հայ բնակչություն: Միջինի տարբերակով կունենանք 3904637 հայ բնակչություն: Ստացված թվից հանենք 1,5 մլն. զոհերի քանակը՝ 2404637, հանած առավելագույնը, 1 մլն. գաղթականություն՝ 1404367, հանած մահմեդականություն ընդունածների քանակը՝ 500000, կունենանք՝ 904637 գրեթե 1 մլն. բնակչության չպարզված քանակություն: Այստեղից էլ պետք է ընդունել, որ 1915թ. կոտորածին զոհ են գնացել ոչ թե 1,5 մլն, այլ նվազագույնը 2404637 կամ 2400440 հայ, այսինքն, կոտորվել է բնակչության 74,38 կամ 74,29%-ը:

Ասվածը չափազանցություն չէ, քանզի Մեծ Եղեռնն իրականացվել է թուրքական կայսրության 800000 ք.կմ. վրա, ոչնչացվել է 66 քաղաքի, 2500 գյուղի, 500000 ընտանիքի բնակչություն: Այս տեղեկությունները հիմնականում վերաբերում են Արևմտյան Հայաստանին: Իսկ ամբողջ կայսրության մասին առայժմ հստակեցված վիճակագրություն գոյություն չունի և, եթե անգամ կա, ուրեմն դրանք ենթադրությունների հետևանքներ են: Այսպիսով, 1895-1915թթ. թուրք բարբարոսապետությունը պաշտոնական տեղեկությունների կամ ընդունելի տեսակետների համաձայն ոչնչացրեց 1800000 հայ: Սակայն, այդ վիճակագրությունը զգում է ճշգրտման ու հստակեցման անհրաժեշտություն: Ուստի, որպես առաջին փորձ, ահա ներկայացնում ենք մեր հաշվարկները, որի համաձայն, կոտորված հայերի թիվը հասնում էր 2700440-ի (երկու կոտորածների գումարելիս՝ 2400440+300000=2700440): Ավելացնենք նաև, որ հայության կոտորածը շարունակվում էր մինչև 1922թ., որի պատճառած զոհերի թիվը տեղ չի գտել մեր հաշվարկներում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] ՀՀՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 4, թ. 30:

[2] Ներկա աղյուսակում ներկայացվող մեր հաշվումները հիմնված են ներքո ներկայացվող աղբյուրների համեմատական վերլուծության վրա: ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, 42, 50, 56, 57, 94, 114, 195, 198, 222, 227, 243, 276, 314, 325, 339, 374, 402, 411, 413, 425, 429, 430, 431, 469, 476, 477, 478, ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, 3բ., գ. 47, Գ. Սրվանձտյանցի ֆոնդ, լրացուցիչ նյութերի ցուցակ, գ. 23, ԲՀԱ, 1976, թիւ 2. ԲԵՀ, 1969, թիւ 2, Ա-Դո. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, Ալի-

շան Ղ. Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1890. Ատրպետ. Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929, Արծրունի Գ. Վիճակագրական տեղեկություններ Հայաստանի բնակչության մասին, տես՝ «Մեղու Հայաստանի», 1883, հունվար, Երիցյան Ա. Թե տաճկական Հայաստանում որքան հայ կա, «Փորձ», 1880. հունիս-հուլիս, Էփրիկյան Հ. Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, պր. 1, Վենետիկ, 1900, հ. 2, Վենետիկ, 1907. Ինճիճյան Ղ. Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, Վենետիկ, 1806, Լալայան Ե. Կարնո գավառի տեղեկագիրը, ԲՀԱ, 1974, թիւ 3, Մելիքյան. Վիճակագիր Խնուս (Հարք) գավառի, Նյու Յորք, 1943, Մինախորյան Մ. Նկարագրական ուղևորություն..., հ. Ա, Պոլիս, 1884, հ. Բ, Գ, Պոլիս 1885, Մելյան. Տաճկա-Հայաստանի ազգաբնակչությունը, «Մուրճ», 1895, թիւ 7, Վիճակագրական տեղեկություն Տաճկաստանի բնակչաց վրա, «Արաքս», 1892, հունիս, Տաշյան Հ. Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին, Վիեննա, 1921, Համբարյան Ա. Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, ԲԵՀ, 1969, թիւ 2, Ծողիկյան. Արևմտահայ աշխարհ, Նյու Յորք 1947:

[3] Ա-Դո. Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 236-237:

[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 319, թ. 63:

[5] ԳԱԹ, Գ. Սրվանձտյանի ֆոնդ, գ. 23, թ. 16:

[6] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, գ. 1, գ. 237, թ. 24:

[7] Էփրիկյան Հ. Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, գ. Ա, Վենետիկ, 1907, էջ 352:

[8] Տեղանունների բառարան (ՏԲ), հ. 2, Երևան, 1988, էջ 527.

[9] Ինճիճյան Հ. Աշխարհագրություն չորից մասացն աշխարհի, հ. Ա, Վենետիկ, 1906, էջ 270:

[10] ՏԲ, հ. 2, էջ 973:

[11] ԳԱԹ, ճշվ. ֆոնդը, գ. 23, թ. 11:

[12] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 5, գ. 164, թ. 11:

[13] Նույն տեղում:

[14] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 332, թ. 9:

[15] Նույն տեղում, գ. 2341, թ. 1, 8, գ. 335, թ. 35:

[16] Նույն տեղում, ֆ. 476, գ. 335, թ. 35:

[17] Նույն տեղում, գ. 331, թ. 21:

[18] ԲԵՀ, 1963, թիւ 2:

[19] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 28, թ. 8:

[20] Նույն տեղում, գ. 131, թ. 32:

[21] Նույն տեղում:.

[22] Братская помощь, Москва, 1898, стр. 23.

[23] Там же, стр. 136.

[24] Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 33:

[25] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 146, թ. 738:

[26] Էփրիկյան Հ., ճշվ աշխ., էջ 393:

[27] Братская помощь, Москва, 1898, стр. 136.

Резюме

О вопросе численности населения провинции Карин, западных армян, жертв резни 1894-1896гг. и геноцида 1915г.

Оганес Затикян

В статье с помощью архивной достоверной информации, свидетельствований статистиков, современных деятелей выявляется фальшивая сущность турецкой статистики, и по таблицам, составленных из расчета природного 0,7% роста, уточняется количество жертв резни 1894-1896гг., Великого Геноцида 1915г. в штате Карин, а также – западных армян.

Summary

Figures of the Victims of 1895-1896 Massacres and the Armenian Genocide in the Province of Karin and Western Armenia.

Hovhannes Zatikyan

In the article the false essence of Turkish statistics is brought to light by means of archival reliable information, witnessing of modern figures, statisticians, and in accordance with the tables provided by the natural 0,7% growth calculations the number of victims of the slaughters of 1894-1896 and the Great Genocide of 1915 of state Karin and the Western Armenians as well is refined upon.